ԵԴ1/1548/01/25
(ՀԿԴ/0149/01/25)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

31 հոկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մայիսի 6-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Արամ Արմենի Մնացականյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 83121825 (ԵԴ1/1548/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ա.Մաթևոսյան) 2025 թվականի մայիսի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1548/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 16-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1548/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Ս.Դաղոյան) 2025 թվականի հունիսի 30-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0149/01/25 (ԵԴ1/1548/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և հակակոռուպցիոն պալատի նախագահի՝ 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ լուծվել է սույն վարույթի առարկայական ընդդատության հարցը և որոշվել է, որ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

4. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Ս.Դաղոյան) 2025 թվականի հուլիսի 17-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0149/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 9-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0149/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Մ.Արզումանյան) 2025 թվականի հոկտեմբերի 23-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

6. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հոկտեմբերի 28-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *« (…) Սույն դեպքում մեղադրյալի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել Օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին (նշված է մեղադրական եզրակացության մեջ), իսկ օրենսգրքի հավելված N 1-ի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործություն է համարվում. «Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»:*

(…)

Արամ Մնացականյանի մեղադրանքում բացակայում է այն ձևակերպումը, որ նա ենթադրյալ արարքը կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ «ՍՓԵՆՍԵՐ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ Լ.Փ.» ընկերության տնօրենը հանդիսացել է Մ.Զ.Ս-ն:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ու 01.07.2022թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի N 1 հավելվածի համաձայն՝ «Հոդված 296. Փողերի լվացումը» ներառվել է կոռուպցիոն հանցանքների ցանկում, իսկ 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքի համաձայն՝ «Հոդված 7. Օրենսգրքի հավելված N 1-ում՝ 1) «Հոդված 296. Փողերի լվացումը» բառերը փոխարինել «Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով. (...)», մինչդեռ Արամ Մնացականյանին մեղսագրվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարում, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, այսինքն՝ ցանկացած դեպքում անհնար է եզրահանգել, որ Ա.Մնացականյանին մեղսագրվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված

կոոուպցիոն հանցանքի կատարում, իսկ ինչ վերաբերում է Լ.Ա-ին, ապա վերջինս չի հանդիսացել ընկերության տնօրենը, ուստի անհնար է փաստել, որ նրա կողմից ենթադրյալ կատարված արարքը կոոուպցիոն բնույթ ունի:

Անդրադառնալով այն փաստին, որ Արամ Մնացականյանին մեղսագրվել է ծառայողական լիազորություններն օգտագործելով փողերի ենթադրյալ լվացման հանցակցություն, Դատարանը վերստին փաստում է, որ մեղադրանքում բացակայում է այն ձևակերպումը, որ Ա.Մնացականյանը ենթադրյալ արարքը կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ հանցակից Լ.Ա-ն չի հանդիսացել ընկերության տնօրենը:

Միաժամանակ Դատարանը արձանագրում է, որ Արամ Մնացականյանին մեղսագրվել է հանցավոր արարք, այն բանի համար, որ նա Մ.Մ-ի և Լ.Ա-ի հետ նախնական համաձայնությամբ կատարել է փողերի լվացում՝ ձեռք է բերել և օգտագործել, փաստացի տիրապետել և տնօրինել է հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերի գույք, որը նպատակ է ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, պատկանելիությունը, իրական բնույթը և ծագման աղբյուրը:

Քրեական գործի ուսումնասիրությամբ, մասնավորապես՝ քրեական գործի 2-րդ հատորի 112-րդ էջում, առկա է «Շանթ» ՍՊԸ կանոնադրական կապիտալի բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրի պատճենը, համաձայն որի «ՍՓԵՆՍԵՐ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ Լ.Փ» Շոտլանդական սահմանափակ ընկերությունը պայմանագրով հանդես է գալիս որպես գնորդ՝ ի դեմս ՀՀ քաղաքացի Դ.Հ-ի, ում լիազորագիրը տրվել է ընկերության տնօրեն Մ.Զ.Ս-ի կողմից:

Այսինքն՝ Դատարանը արձանագրում է, որ Լ.Ա-ն «ՍՓԵՆՍԵՐ ԻՆԴԱՍԹՐԻԱԼ Լ.Փ» Շոտլանդական սահմանափակ ընկերության տնօրեն չի հանդիսացել:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության դրսևորման հիմնական ձև, պետք է իրականացվի որոշակի սահմաններում, որի չափանիշներից մեկն էլ քրեական գործի ընդդատության ինստիտուտն է, որը սահմանում է, թե որ դատարանն է իրավասու քննել գործը,

որպեսզի երաշխավորվեն անձի՝ դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքները, բացառելով քրեական գործը քննելու պատշաճ դատարանի որոշման վերաբերյալ վեճերը, որպիսի պայմաններում Դատարանը հաշվի առնելով, որ ենթադրյալ հանցավոր արարքը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցները համաձայն չեն, որ Հակակոռուպցիոն դատարանը շարունակի գործի քննությունը, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0149/01/25 քրեական գործն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, որպիսի պայմաններում անհրաժեշտ է ՀԿԴ/0149/01/25 քրեական գործը փոխանցել ըստ ընդդատության: (…)»[1]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ Վճռաբեկ դատարանը 2025 թվականի հուլիսի 14-ին որոշում է կայացրել, որ Արամ Արմենի Մնացականյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:*

ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հուլիսի 17-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0149/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատաքննություններ նշանակելու մասին:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 9-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0149/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

2025 թվականի հոկտեմբերի 21-ին թիվ ԵԴ1/1548/01/25 քրեական գործը վերամակագրվել և 2025 թվականի հոկտեմբերի 22-ին հանձնվել է դատավոր Մ.Արզումանյանին:

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 101-107:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթը պետք է ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու համար: (…)»:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասու՞ էր արդյոք Հակակոռուպցիոն դատարանը քննարկման առարկա դարձնել թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթի առարկայական ընդդատության հարցը և վարույթն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան այն դեպքում, երբ վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ արդեն իսկ որոշվել էր սույն վարույթով իրավասու դատարանը:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի ղ համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

11. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ լուծվել է սույն վարույթի առարկայական ընդդատության հարցը, և որոշվել է, որ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

- Հակակոռուպցիոն դատարանը, ստանձնելով քրեական վարույթը, վերոգրյալի պայմաններում կրկին քննարկման առարկա դարձնելով սույն վարույթի ընդդատության հարցը, արձանագրել է, որ Ա.Մնացականյանին վերագրված ենթադրյալ հանցանքը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ինչպես նաև վարույթի հանրային և մասնավոր մասնակիցները համաձայն չեն թիվ ՀԿԴ/0149/01/25 քրեական վարույթի քննությունը Հակակոռուպցիոն դատարանում շարունակելուն, և որոշում է կայացրել վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[2]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Հակակոռուպցիոն դատարանի որոշմանը՝ փաստելով, որ համաձայն վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մասին 2025 թվականի հուլիսի 14-ի որոշման՝ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին[3]:

12. Վերոգրյալից հետևում է, որ 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ արդեն իսկ լուծվել է թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) վարույթի առարկայական ընդդատության հարցը և արձանագրվել, որ Արամ Արմենի Մնացականյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթն **ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին**: Վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մասին վերոգրյալ որոշումից հետո ստանձնելով քրեական վարույթը, Հակակոռուպցիոն դատարանը, թույլ տալով

---

[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

անհարկի դատական շրջապտույտ, առանց որևէ իրավական հիմնավորման և ծանրակշիռ փաստարկման կրկին քննարկման առարկա է դարձրել սույն վարույթի առարկայական ընդդատության հարցը և արդյունքում որոշում կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

Նման պայմաններում, փաստում ենք, որ վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մասին 2025 թվականի հուլիսի 14-ի որոշման առկայության պայմաններում Հակակոռուպցիոն դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 9-րդ հոդվածի ուժով համարվելով իրավասու դատարան, չէր կարող քննարկման առարկա դարձնել թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթի առարկայական ընդդատության հարցը և վարույթն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

13. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթը պետք է փոխանցել Հակակոռուպցիոն դատարան:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Արամ Արմենի Մնացականյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) քրեական վարույթը փոխանցել Հակակոռուպցիոն դատարան:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ